

**Դատական Գործ N: ԵՔԴ/1066/02/08**

<b>Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:</b>	27-10-2008
<b>Հայցվոր/դիմող</b>	
Անուն:	ՏԿՄ Թրեյդ ԲԲԸ
Հասցե:	Երևան, Ավան, Նարեկացի 31-18
<b>Պատասխանող</b>	
Անուն:	Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփ գործակալություն
Հասցե:	Երևան, Կառավարական տուն 3
<b>Ինքնուրույն պահանջ ներկայացնող:</b>	
<b>3-րդ անձ</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
<b>Պահանջ:</b>	ապրանքային նշանի զիջման պայմանագրի գրանցումն անվավեր ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու
<b>Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	5.5
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	27-10-2008
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Երևանի քաղաքացիական
Դատավորի անուն:	Սամվել Եփրեմի Թադևոսյան
<b>Որոշման ամսաթիվ:</b>	29-10-2008
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	28-11-2008
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	16-12-2008
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	23-12-2008
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	16-01-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	10-02-2009
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	20-11-2008
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	
<b>Հայցի լուծման ամսաթիվ:</b>	23-02-2009

Հայցի լուծումը:	Բավարարվել է
<b>Հոդված</b>	
Հոդված	130-131,149-4
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
<b>Ղատական ակտ:</b>	<p>Գործ ԵԲԴ 1066/02/08</p> <p>ԿՃԻՌ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>23.02.2009թ. ք. Երևան</p> <p>Երևանի քաղաքացիական դատարանը</p> <p>Նախագահությամբ Սամվել Թադևոսյանի Քարտուղարությամբ Հեղինե Աբրահամյանի Մասնակցությամբ Հայցվորի ներկայացուցիչ Տիգրան Մարտիրոսյանի Պատասխանողի ներկայացուցիչ Արա Աբգարյանի 3-րդ անձի ներկայացուցիչ Անահիտ Մարտիրոսյանի</p> <p>Ղռնբաց ղատական նիստում, դատարանում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «ՏՎՍ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության /գրանցման թիվ՝ 1027700498209, ՀՎՀՀ 7724005091/ ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, դատարանի որոշմամբ որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող «Մասթեր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ մտավոր սեփականության խախտված իրավունքները վերականգնելու և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության Բողոքարկման խորհրդի 2008թ. հուլիսի 29-ի Ապրանքային նշանի /գրանցման թիվ՝ 9935/ զիջման պայմանագրի գրանցումը անվավեր ճանաչելու մասին թիվ 24/08 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին</p> <p><b>Պ Ա Ր Զ Ե Ց</b> I. Նկարագրական մաս</p> <p>1.Ղատավարական նախապատմությունը. Հայցվորի ներկայացուցիչը 27.10.2008թ. հայց է ներկայացրել Երևանի քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, խնդրելով վերականգնել հայցվորի խախտված մտավոր սեփականության իրավունքը և անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 2008թ. հուլիսի 29-ի Ապրանքային նշանի /գրանցման թիվ՝ 9935/ զիջման պայմանագրի գրանցումը անվավեր ճանաչելու մասին թիվ 24/08 որոշումը:</p> <p>Գործի քննությունն իրականացվել է նախապատրաստական փուլով: Ղատարանի 28.11.2008թ. որոշմամբ «Մասթեր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ներգրավվել է որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող 3-րդ անձ:</p>

Հայցվորի դիրքորոշումը.

Հայցվորի ներկայացուցիչ Տիգրան Մարտիրոսյանը դատարանին հայտնել է, որ 2005 թվականի նոյեմբերի 18-ին «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերության և «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության միջև կնքվել է ապրանքային նշանի զիջման պայմանագիր (այսուհետ՝ Ձիջման պայմանագիր), որով «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերությունը իրեն պատկանող թիվ 9935 ապրանքային նշանը զիջել է «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերությանը:

Ձիջման պայմանագիրը 2008 թվականի մայիսի 29-ին գրանցվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում (գրանցման համարը 779): Ձիջման պայմանագիրը գրանցելու մասին դիմումը գործակալություն է ներկայացվել Արարատ Գալոյանի կողմից, որպես ապրանքային նշանի սեփականատեր «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերության լիազորված անձ: Լիազորագիրը կցված է եղել դիմումին, ինչպես և պահանջվել է օրենսդրությամբ: 2008 թվականի հունիսի 13-ին «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերությունը գործակալություն է դիմել՝ պահանջելով չեղյալ ճանաչել զիջման պայմանագրի գրանցումը, պահանջի հիմքում դնելով մի շարք փաստարկներ, որոնց գերակշիռ մասին, սակայն Գործակալության Բողոքարկման խորհուրդը չի անդրադարձել և չի քննել, քանի որ դրանք քննարկվող հարցին չէին վերաբերվել: Միևնույն ժամանակ, Բողոքարկման խորհուրդը, իր 2008 թվականի հուլիսի 29-ի թիվ 24/08 որոշմամբ, բավարարել է պահանջը որպես հիմք ընդունելով հետևյալը. 1.«Տվյալ դեպքում խախտվել են կարգի 4-րդ և 5-րդ կետերը, քանի որ համաձայն «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերության 03.06.2008թ. գրության ընկերությունը մտադրություն չի ունեցել զիջելու ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները երրորդ անձանց ..., 2.... ինչպես նաև նիստի ժամանակ Ա. Գալոյանը հայտնել էր, որ ինքը դիմում ներկայացնելու հանձնարարություն ստացել է «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությունից, որը կարգի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն նման իրավասություն չի ունեցել ...

Հայտնել է, որ նշանակում է, որ 2008 թվականի մայիսի 29-ի դրությամբ Ձիջման պայմանագիրը բավարարել է օրենքի պահանջներին. օրենքի պահանջները պահպանված են եղել նաև գրանցման գործընթացում, իսկ ընդամենը երկու ամիս անց, որի ընթացքում որևէ փաստական կամ իրավական հանգամանք չի փոփոխվել, Գործակալությունն արդեն կամայականորեն հակառակ որոշում է կայացրել և որպես հիմնավորում նշել է, թե Ձիջման պայմանագրի կողմերից մեկը մտադրություն չի ունեցել այն կնքելու: Պետական մարմինը դատողություններ է արել պայմանագիր կնքելու, կամ պայմանագիրը կնքելուց հրաժարվելու կողմի մտադրության մասին, ինչը նույնպես իր իրավասություններից դուրս է: Բողոքարկման խորհուրդն իր որոշման հիմնավորում էր նշել նաև այն փաստը, թե Արարատ Գալոյանն իրավունք չի ունեցել Ձիջման պայմանագրի գրանցման դիմում ներկայացնել: Նման եզրահանգումը ևս Բողոքարկման խորհրդի և Գործակալության ընդհանրապես՝ իրավասությունների սահմանազանցում է հանդիսանում, քանի որ գործի նյութերից ակնհայտ է դառնում, որ դիմում ներկայացնելու պահին Արարատ Գալոյանը համապատասխան և պատշաճ լիազորագրեր է ունեցել երկու կողմերից էլ: Հետևաբար վիճարկելով նրա՝ դիմում ներկայացնելու իրավունքը, Բողոքարկման հանձնաժողովը կրկին միջամտում է կողմերի քաղաքացիաիրավական հարաբերություններին: Բողոքարկման խորհուրդի կողմից կատարվել է նաև հետևյալ խախտումները. նախ Ձիջման պայմանագիրը գրանցելու մասին որոշումը նաև վարչական ակտ է հանդիսանում, հետևաբար, հայցվորի մտավոր սեփականության իրավունքների խախտումը իրականացվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջների ոտնահարմամբ:

Մասնավորապես, Ձիջման պայմանագիրը անվավեր ճանաչելու համար պետք է առկա լինեն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերը, որը սահմանում է, որ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով. բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում: Բողոքարկման խորհուրդն այս հոդվածի վրա հղում չի կատարել, հետևաբար անհասկանալի է, թե տվյալ դեպքում կոնկրետ որ հիմքն է առկա եղել:

Բողոքարկման խորհուրդը պնդում է, որ կարգի 4-րդ և 5-րդ կետերը խախտվել են, քանի որ «Մասթր Բևրիջ Ինդասթրի Պտե.Լթդ» ընկերությունը մտադրություն չի ունեցել զիջելու ապրանքային նշանը:

Նախ, Կարգի 4-րդ և 5-րդ կետերը վերաբերում են զիջման պայմանագրերի գրանցման դիմումի ներկայացման ընթացակարգին, այլ ոչ թե ապրանքային նշանը զիջելու մտադրություն տվյալ դեպքում իրոք առկա է եղել, ապա դա 4-րդ և 5-րդ կետերի խախտման ոչ մի կերպ հանգեցնել չէր կարող:

Բողոքարկման խորհուրդը պնդում է, որ կարգի 4-րդ և 5-րդ կետերը խախտվել են, քանի որ նիստի ժամանակ Ա.Գալոյանը հայտնել էր, որ ինքը դիմում ներկայացնելու հանձնարարություն ստացել է «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությունից, որը կարգի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն նման իրավասություն չի ունեցել:

Նշել է, որ կարգի 4-րդ և 5-րդ կետերով «հանձնարարություն ստանալու» պահանջ կամ պայման նախատեսված չէ, հետևաբար այդպիսի հանձնարարության բացակայությունը կամ այն իբր թե ոչ իրավասու անձի կողմից տրված լինելը չի կարող վերը նշված կետերի խախտման հանգեցնել:

Ղատարանի ուշադրությունը հրավիրել է նաև այն հանգամանքին, որ Բողոքարկման խորհուրդը որևէ կերպ չի հիմնավորել նույնիսկ այն հանգամանքը, թե «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրարական

ընկերությունն ինչու չի ունեցել այդպիսի հանձնարարություն տալու իրավասություն կարգի 4-րդ և 5-րդ կետերի իմաստով: Իսկ, քանի որ այդ փաստը Խորհրդի որոշման հիմքում ընկած որոշիչ փաստարկներից մեկն է, ապա դրա չհիմնավորված լինելը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի իմաստով ինքնին Խորհրդի որոշման անվավեր ճանաչելու հիմք է:

Տվյալ դեպքում, Բողոքարկման խորհրդի որոշումից պարզ չեն դառնում ոչ իրավական հիմքերը, ոչ փաստական հիմքերը, ոչ էլ այն նկատառումները, որոնցից ելնելով արվել է վերը հիշատակված եզրահանգումը: Հետևաբար, 57-րդ հոդվածի պահանջների խախտումը ցանկացած դեպքում ակնհայտ է, այսինքն առկա է օրենքի պահանջի խախտում, ինչը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն բավարար հիմք է Խորհրդի որոշումն անվավեր ճանաչելու համար:

Կարգի 4-րդ և 5-րդ կետերի խախտման մասին խոսք լինել չի կարող, հաշվի առնելով այն փաստը, որ Ձիջման պայմանագրի գրանցման մասին դիմումը ներկայացնելու պահին Արարատ Գալոյանը ունեցել է լիազորագրեր, ինչպես «ՏՎՄ Թրեյդ», այնպես էլ «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերություններից, որոնք ներկայացվել են Գործակալությանը: Եթե այդպիսիք առկա չլինեին,

Գործակալությունն ուղղակի չէր ընդունի դիմումը և չէր քննարկի ու չէր գրանցի Ձիջման պայմանագիրը, քանի որ դիմումը ներկայացված կլիներ իրավասություն չունեցող անձի կողմից: Նույնիսկ, եթե Բողոքարկման խորհրդի բոլոր փաստարկները համարվի հիմնավորված, ապա տվյալ դեպքում Բողոքարկման

խորհրդի 29.07.2008 թվականի թիվ 24/08 որոշումը խախտում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը, որի համաձայն. վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք ...: Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում: Տվյալ դեպքում, ՀՀ մտավոր սեփականության գործակալության Բողոքարկման խորհրդի որոշումը անհավասար մոտեցում է հանդիսանում միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, որոնց պայմաններում ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը 2008 թվականի մայիսի 29-ին, արդեն գրանցել է Զիջման պայմանագիրը:

Մասնավորապես, եթե կրկին ընդհանրացվի Բողոքարկման խորհրդի որոշման հիմնավորումները, ապա դրանք կայանում են Կարգի 4-րդ և 5-րդ կետերի ենթադրյալ խախտումների առկայության մեջ: Սակայն, այդ կետերը սահմանում են այն պարտադիր պահանջները, որոնք պետք է պահպանվեն ապրանքային նշանի զիջման ցանկացած պայմանագրի գրանցման ժամանակ: Հետևաբար, Գործակալությունը 2008 թվականի մայիսի 29-ին, գրանցելով Զիջման պայմանագիրը, բնականաբար ինչպես և պահանջում է Կարգը, ստուգել է այդ կետերի պահանջների կատարված լինելու փաստը: Իսկ պայմանագիրը գրանցելու փաստը վկայում է միայն մեկ բան, որ Կարգի 4-րդ և 5-րդ կետերի պահանջները խախտված չեն եղել:

Բողոքարկման խորհուրդն իր 29.07.2008 թվականի թիվ 24/08 որոշմամբ ըստ էության փորձել է իրավական հիմնավորում տալ «Մալթր Բերիջ Ինդասթրիա Պտե.Լթդ» ընկերության կողմից իր կնքած քաղաքացիաիրավական պայմանագիրը չկատարելու կամայական ցանկությանը: Վիճարկման ենթակա չէ այն փաստը, որ պետական մարմինը չպետք է միջոց և գործիք հանդիսանա քաղաքացիաիրավական պայմանագրային հարաբերությունների կողմերից մեկի համար իր պայմանագրային պարտավորությունների կատարումից հրաժարվելու համար:

Բողոքարկման խորհրդի որոշման փաստարկները ընդհանրապես չեն առնչվում ապրանքային նշանի զիջման պայմանագրի գրանցման ընթացակարգի խախտմանը, չնայած որ օրենքով հենց դա է նրա իրավասությունների սահմանը:

Բողոքարկման խորհուրդի փաստարկները գուցե վերաբերում են Զիջման պայմանագրի անվավերությանը կամ գուցե վիճարկում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ներկայացուցչության ինստիտուտի էությունն ու սկզբունքները: Սակայն բոլոր դեպքերում դրանք դուրս են Գործակալության և Հանձնաժողովի՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակից, քանի որ եթե նույնիսկ գոյություն ունեն Զիջման պայմանագրի պատշաճությունը կամ Արարատ Գալոյանի լիազորագրերի պատշաճությունը վիճարկող հանգամանքներ, կապված այն բանի հետ որ բացակայում են ինչ որ «մտադրություններ» կամ «հանձնարարականներ», ապա դրանք կարող են քննվել և լուծում ստանալ միայն դատական կարգով այլ ոչ թե Բողոքարկման հանձնաժողովի կողմից:

Ղատարանից խնդրել է վերականգնել հայցվորի խախտված մտավոր սեփականության իրավունքը և անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործա-կա-լության բողոքարկման խորհրդի 2008 թվականի հուլիսի 29-ի Ապրանքային նշանի (գրանցման թիվ՝ 9935) զիջման պայմանագրի գրանցումը անվավեր ճանաչելու մասին թիվ 24/08

որոշումը:

Պատասխանողի կողմից ներկայացված Սինգապուրի դեսպանի և «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթ» ընկերության նամակների վերաբերյալ հայտնել է, որ ստացվում է, որ «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթ» և «ՏՎՄ Թրեյդ» ընկերությունները կնքել են ապրանքային նշանի զիջման պայմանագիրը Գործակալությունում 2008 թվականի մայիսի 29-ին գրանցելիս բավարարել է օրենքի պահանջներին. օրենքի պահանջները պահպանված են եղել նաև գրանցման գործընթացում, հակառակ դեպքում Ջիջման պայմանագիրն ուղղակի չէր գրանցվի: Ջիջման պայմանագիրը որևէ ատյանում չի վիճարկվել և դրա անվավերության, կեղծ լինելու կամ օրենքին որևէ այլ կերպ հակասելու մասին ապացույց կամ իրավական փաստաթուղթ գոյություն չունի: Եվ քանի որ սույն գործը վերաբերում է միայն ապրանքային նշանի գրանցման և գրանցումն անվավեր ճանաչելու գործընթացներում Մտավոր սեփականության գործակալության գործողությունների իրավաչափությանը, հետևաբար, Ջիջման պայմանագրի վավերականությունը որևէ կերպ դիտարկման առարկա լինել չի կարող:

Ինչ վերաբերում է զիջման մտադրություն ունենալու կամ չունենալու հանգամանքին, ապա նշել է, որ 03.06.2008 թվականին ընկերությունը գուցե այդպիսի մտադրություն չի ունեցել, սակայն գործի նյութերում առկա է, որ Ջիջման պայմանագիրը կնքվել է 2005 թվականի նոյեմբերի 18-ին, որը նշանակում է, որ այդ ժամանակ, ընկերությունն այնուամենայնիվ նման մտադրություն արտահայտել է ու այն իրավական ամրագրում է ստացել: Ավելին, լիազորագիրը, որի հիման վրա դիմումը ներկայացվել է Ջիջման պայմանագիրը գրանցելու, ինչպես և պահանջվում է ՀՀ օրենքներով տրվել է այդ թվում նաև Ընկերության կողմից նույն 2005 թվականի նոյեմբերի 18-ին:

Այսինքն, գոյություն ունի առնվազն երկու իրավական փաստաթուղթ, որոնք ուղղակիորեն վկայում են այդ «մտադրությունը», ընդ որում այդ փաստաթղթերից ոչ մեկի վավերությունը կամ դրանց կեղծ լինելու հարցը պատշաճ կերպով մինչ այժմ չի բարձրացվել ու քննարկվել:

Լիազորագիրը արտոնագրային հավատարմատարին ընկերության կողմից տրվել է 2005 թվականի նոյեմբերի 18-ին երեք տարի ժամկետով, այսինքն մինչև 2008 թվականի նոյեմբերի 18-ը:

Վիճարկվող ապրանքային նշանի զիջման պայմանագիրը գրանցվել է 2008 թվականի մայիսի 29-ին, ընկերությունը Գործակալությանը դիմել է 03.06.2008 թվականին, իսկ դեսպանը 09.06-ին. Եվս մի նոտա էլ Սինգապուրի դեսպանությունն այդ առթիվ ներկայացրել է նույն թվականի հուլիսի քսանութին: Այդ ժամանակ լիազորագիրը, եղել է ուժի մեջ. մինչդեռ ենթադրել է, որ առաջին քայլերից մեկը պետք է լիներ հենց դրա վերացումը, որն ընկերությունը կարող էր անել: Եթե ընկերությունն իսկապես գտել է, որ լիազորագիրը անվավեր է կամ կեղծ կամ որևէ այլ հիմքով ոչ իրավաչափ, ապա այն վերացնելը անհետաձգելի և պարտադիր անհրաժեշտություն է, քանի որ ըստ այդ լիազորագրի արտոնագրային հավատարմատարը շատ լայն իրավասություններ է ունեցել ընկերության անունից հանդես գալու հարցում, իսկ դա չէր կարող գոհացնել ընկերությանը, եթե իհարկե այն համաձայն չի եղել լիազորագրին ու դրա բովանդակությանը:

Չնայած, Բողոքարկման խորհուրդն իր 2008 թվականի հուլիսի 29-ի որոշման մեջ հստակ նշել է, որ Ջիջման պայմանագրի ու լիազորագրի վիճարկմանը վերաբերող բոլոր հարցերի քննությունն իր իրավասությունից դուրս է և դրանք պետք է քննվեն քաղաքացիական դատավարության ընթացակարգով, Բողոքարկման խորհուրդը քննել ու վերջնական որոշում է կայացրել վիճարկվող խնդրի վերաբերյալ: Դրանով Բողոքարկման խորհուրդն ըստ էության հավաստել է, որ ապրանքային նշանի գրանցման կամ գրանցումն անվավեր ճանաչելու գործընթացներում պայմանագրի և լիազորագրի վավերության հարցը չի քննվում. եթե կողմերից մեկը

նման խնդիր ունի պետք է դիմի դատարան, որից հետո նոր Գործակալությունը հաշվի կնստի արդեն այդ հարցի վերաբերյալ դատարանի գնահատումների հետ:  
Այսինքն, քննվող գործը վերաբերում է միայն Գործակալության գործողությունների և դրա ընդունած որոշումների իրավաչափությանը, և քանի որ Զիջման պայմանագրի ու լիազորագրի վավերականությունը Գործակալությունը դիտարկել չի կարող, հետևաբար այդ հարցերը չեն կարող դիտարկվել նաև սույն գործի շրջանակներում:

**Պատասխանողի դիրքորոշումը**

Պատասխանող Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության ներկայացուցիչ Արա Աբգարյանը հայտնել է.

Հայաստանի Հանրապետությունում «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե. Լթ.» ընկերության անվամբ 2005թ. հոկտեմբերի 17-ին գրանցվել է «GOLDEN EAGLE» /«Գոլդեն Իգլը»/ բառային ապրանքային նշանը 30.04.2003թ-ի առաջնությամբ ԱՇՄԴ (ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման) 30-րդ դասի «սուրճ, սուրճի փոխարինիչներ, սրճային ըմպելիքներ, սրճա-կաթնային ըմպելիքներ.» ապրանքների համար, հայտը ներկայացվել է ընկերության կողմից լիազորված (լիազորագիրը տրված է 25.04.2003թ., ստորագրված Մայսոր Նագարաջա Կարտիկի կողմից) արտոնագրային հավատարմատար է.

Նահապետյանի կողմից:

2008թ. մայիսի 15-ին արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանը «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե. Լթ.» ընկերության անունից (լիազորագիրը տրված է 18.11.2005թ., ստորագրված Ա. Վ. Սարգսևի կողմից) գրանցման է ներկայացրել զիջման պայմանագիր կնքված 18.11.2005թ, համաձայն որի գրանցման թիվ 9935 «GOLDEN EAGLE» /«Գոլդեն Իգլը»/ բառային ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե. Լթ.» ընկերությունը զիջում է «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերությանը: 2008թ. մայիսի 29-ին գրանցվել է զիջման պայմանագիրը (գրանցման թիվ 779):

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) իր 2008թ. հուլիսի 29-ի նիստում քննարկել է «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե. Լթ.» ընկերության 13.06.2008թ. բողոքը՝ «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե. Լթ.» ընկերությանը պատկանող գրանցման թիվ 9935 ապրանքային նշանի «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերությանը զիջելու մասին պայմանագրի գրանցման որոշման դեմ:

Բողոքի քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը 29.07.2008թ. որոշում է կայացրել «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե. Լթ.» ընկերության բողոքը բավարարելու և «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե. Լթ.» ընկերությանը պատկանող գրանցման թիվ 9935 ապրանքային նշանի «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերությանը զիջելու մասին պայմանագրի գրանցումն անվավեր ճանաչելու մասին:

Հայտնել է, որ գործակալությունը չի ընդունում հայցադիմումով ներկայացված պահանջներն ամբողջությամբ և այդ պահանջների հիմքերը, ինչպես նաև պատասխանով դատարանից խնդրում է մերժել հայցադիմումն ամբողջությամբ հետևյալ պատճառաբանությամբ. նախ գործակալությունը ապրանքային նշանի զիջման մասին պայմանագրի կնքմանը, այդ պայմանագրի կնքման «կեղծ» կամ «ոչ իրավասու անձի կողմից կնքելու» հարցերը չի քննարկել ու որոշման մեջ չի անդրադարձել, քանի որ դա դատարանների իրավասության հարցն է: Վիճարկվող որոշումում «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ օրենք) 27-րդ հոդվածը սահմանում է՝ «Ապրանքային նշանը պայմանագրով կարող

է գիջվել այլ անձանց՝ բոլոր այն ապրանքների կամ նրանց մի մասի համար, որոնք նշված են ապրանքային նշանի վկայագրում:  
Ապրանքային նշանը գիջել չի թույլատրվում, եթե դա կարող է սպառողին մոլորության մեջ գցելու պատճառ դառնալ՝ ապրանքին կամ դրա արտադրողին վերաբերող հարցերում:», օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է՝ «Ապրանքային նշանի գիջման և լիցենզային պայմանագրերը գրանցվում են լիազոր մարմնում: Չգրանցված պայմանագիրը համարվում է անվավեր:», այսինքն՝ ապրանքային նշանի գիջումը բաղկացած է երկու պարտադիր իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններից՝ գիջման մասին պայմանագիր կնքելու և այն գործակալությունում գրանցելու: Իսկ «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերությունը համապատասխան նամակով տեղեկացրել է, որ ապրանքային նշանը գիջելու մտադրություն չունի ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները երրորդ անձանց գիջելու, այսինքն՝ և՛ պայմանագիր կնքելու և՛ այն գրանցելու: Պայմանագրի կնքման «կեղծ» կամ «ոչ իրավասու անձի կողմից կնքելու» «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը, հիմքերը բողոքարկման խորհուրդը չի քննարկել, այլ քննարկել է միայն պայմանագրի գրանցմանը ներկայացման պայմանների պահպանման հարցերը, որը և արտացոլված է որոշումում և բողոքարկման խորհրդի իրավասության հարցն է: Ուստի հայցվորի այն բոլոր պնդումները, որ գործակալությունը միջամտել է կողմերի քաղաքացիաիրավական հարաբերություններին անհիմն է: Ինչ վերաբերում է պայմանագրի գրանցման դիմում ներկայացնելու համար Ա. Գալոյանի լիազորություններին, ապա 18.11.2005թ. տրված լիազորագիրը չի պարունակում «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերությանը պատկանող գրանցման թիվ 9935 ապրանքային նշանի գիջման մասին պայմանագիրը գրանցելու դիմում ներկայացնելու մասին նշում, ինչպես նաև լիազորագրում նշում չկա այն մասին, որ կնքված պայմանագիրը պետք է ներկայացվի 2008թ. այսինչ օրը, այնինչ պայմանագիրը գրանցման է ներկայացվել 15.05.2008թ., իսկ ապրանքային նշանի սեփականատերը իր նամակի համաձայն «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության անունից կոնկրետ այս ապրանքային նշանի գիջման պայմանագրի գրանցման դիմում ներկայացնելու հանձնարարություն որևէ մեկի չի տվել, իսկ Ա. Գալոյանի հայտարարության համաձայն լիազորագիրը նա ստացել է 2008թ. «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության կողմից (խոսքը ստանալու, այլ ոչ թե ստորագրելու մասին է): Հետևաբար «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերությունը չի լիազորել Ա. Գալոյանին վիճարկվող պայմանագիրը գրանցման ներկայացնելու, որով և խախտվել է «Ապրանքային նշանների գիջման մասին պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի» 5-րդ կետը, համաձայն որի «Սույն կարգի 4-րդ կետում նշված դիմումներն ստորագրում է ապրանքային նշանի սեփականատերը կամ նրա կողմից լիազորված անձը:», այսինքն՝ չի պահպանվել դիմում ներկայացնելու օրենսդրությամբ սահմանված պայմանները, այն ներկայացվել է ոչ այն անձի կողմից, ով պետք է ներկայացներ դիմումը, այսինքն սեփականատիրոջ կողմից: Բողոքարկման խորհրդի վիճարկվող որոշումում առկա են ինչպես էական փաստական հիմքերը՝ դիմումը սեփականատիրոջ կողմից չլիազորված անձի կողմից ներկայացնելը, այնպես էլ իրավական հիմքերը՝ կարգի 4-րդ և 5-րդ հոդվածները, այսինքն «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Գտել է, որ հայցվորի պահանջները անհիմն են և հայցադիմումը պետք է մերժվի ամբողջովին:

Երրորդ անձի դիրքորոշումը  
Երրորդ անձ «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերության ներկայացուցիչ Անահիտ Մարտիրոսյանը առարկելով հայցի դեմ



հայտնեց, որ ի սկզբանե պայմանագրի գրանցումը տեղի է ունեցել օրենքի խախտմամբ, գործակալությունը պատշաճ չի ուումնասիրել փաստաթղթերը, որոնք ներկայացրել է հայցվոր կողմը, չի ուսումնասիրել լիազորագրով լիազորված անձի՝ նման լիազորություններ ունենալու հանգամանքը, քանի որ լիազորագրում նշված է որ լիազորված անձը հանդես է գալիս կանոնադրության հիման վրա, ուստի Բողոքարկման խորհուրդը ճիշտ է գնահատել:

II. Պատճառաբանական մաս.

Գործի փաստերը.

Ղատարանի համար էական նշանակություն ունեցող փաստերն են. Հայաստանի Հանրապետությունում «Մասթր Բերիչ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության անվամբ 2005թ. հոկտեմբերի 17-ին գրանցվել է «GOLDEN EAGLE» /«Գոլդեն Իգըլ»/ բառային ապրանքային նշանը:

«ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության և «Մասթր Բերիչ Ինդասթրիս Պտե.Լթդ.» ընկերության միջև 18.11.2005 թվականին կնքվել է գրանցման թիվ 9935 «GOLDEN EAGLE» /«Գոլդեն Իգըլ»/ բառային ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների զիջման մասին պայմանագիր, որով «Մասթր Բերիչ Ինդասթրիս Պտե.Լթդ.» ընկերությունը այդ ապրանքային նշանի նկատմամբ իր իրավունքները զիջել է հայցվոր ընկերությանը:

«Մասթր Բերիչ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության Ա. Վ. Սարգսի կողմից 18.11.2005թ. տրված լիազորագրով արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանը 2008թ. մայիսի 15-ին դիմում է ներկայացրել ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն, խնդրելով գրանցել վկայական թիվ 9935 ապրանքային նշանի զիջման մասին կից ներկայացվող պայմանագիրը, համաձայն որի նշանի սեփականատեր «Մասթր Բերիչ Ինդասթրիս Պտե.Լթդ.» ընկերությունը թիվ 9935 ապրանքային նշանը զիջում է Օբշչեստվո ս օգրանիչեննոյ օտվետստվեննոստյու «ՏՎՄ-տրեյդ» ընկերությանը:

Զիջման մասին պայմանագիրը ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը գրանցել է 2008 թվականի մայիսի 29-ին (գրանցման թիվ 779):

2008 թվականի հունիսի 13-ին «Մասթր Բերիչ Ինդասթրիս Պտե.Լթդ.» ընկերությունը բողոք է ներկայացրել ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ՝ զիջման պայմանագրի գրանցման որոշման դեմ:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը բողոքի քննարկման արդյունքում 29.07.2008թ. թիվ 24/08 որոշմամբ բավարարել է «Մասթր Բերիչ Ինդասթրիս Պտե.Լթդ.» ընկերության 13.06.2008թ. բողոքը և «Մասթր Բերիչ Ինդասթրիս Պտե.Լթդ.» ընկերությանը պատկանող գրանցման թիվ 9935 ապրանքային նշանի «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերությանը զիջելու մասին պայմանագրի գրանցման մասին որոշումը ճանաչել է անվավեր, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ խախտվել են «Ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման» կարգի 4-րդ և 5-րդ կետերը, քանի որ համաձայն «Մասթր Բերիչ Ինդասթրիս Պտե.Լթդ.» ընկերության 03.06.2008թ. գրության ընկերությունը մտադրություն չի ունեցել զիջելու ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները 3-րդ անձանց, ինչպես նաև նիստի ժամանակ Ա. Գալոյանը հայտնել էր, որ ինքը դիմում ներկայացնելու հանձնարարությունը ստացել է

«ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության կողմից, որը կարգի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն նման իրավասություն չի ունեցել:

«ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության և «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթ» ընկերության միջև 18.11.2005 թվականին կնքված գրանցման թիվ 9935 «GOLDEN EAGLE» /«Գոլդեն Իգլ»/ բառային ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների զիջման մասին պայմանագրի և արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանին տրված լիազորագրի վավերականության կամ իրավաբանական ուժ ունենալու հարցը որևէ ատյանում չի քննվել:

#### Վերլուծություն

Քննելով հայցը դատարան ներկայացրած հայցադիմումի սահմաններում, դատարանը գտավ, որ հայցը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն «Ապրանքային նշանը պայմանագրով կարող է զիջվել այլ անձանց՝ բոլոր այն ապրանքների կամ դրանց մի մասի համար, որոնք նշված են ապրանքային նշանի վկայագրում»: Նույն օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է, որ «Ապրանքային նշանի զիջման և լիցենզային պայմանագրերը գրանցվում են լիազոր մարմնում: Զգրանցված պայմանագիրը համարվում է անվավեր»: Լիազոր մարմին է հանդիսանում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը:

Ապրանքային նշանների զիջման պայմանագրերի գրանցման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 11-ի թիվ 49-Ն որոշմամբ: Այդ կարգի 4-րդ կետը սահմանում է զիջման մասին պայմանագրերի գրանցման համար դիմումի ներկայացման պահանջը, իսկ 5-րդ կետը սահմանում է, որ այդ դիմումները ստորագրում է ապրանքային նշանի սեփականատերը կամ նրա կողմից լիազորված անձը:

Մտավոր սեփականության գործակալությունը իր 29.07.2008 թվականի որոշմամբ անվավեր ճանաչելով զիջման մասին պայմանագրի գրանցումը հիմնվել է երկու պատճառաբանության վրա.

1. «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթ» ընկերությունը մտադրություն չի ունեցել զիջելու ապրանքային նշանի նկատմամբ իր իրավունքները երրորդ անձանց

2. Զիջման մասին պայմանագիրը գրանցման ներկայացրած արտոնագրային հավատարմատարը այդպիսի լիազորություն չի ունեցել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում: Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

Այսինքն, Զիջման պայմանագրի գրանցումն անվավեր ճանաչելու համար պետք է առկա լինեն վերը նշված իրավական ակտի հիմքերը:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը 29.07.2008թ. թիվ 24/08 որոշումը կայացնելիս չի նշել թե դրանցից որն է առկա, կամ էլ չի ներկայացվել որևէ ապացույց դրանցից մեկի առկայության վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Բողոքարկման խորհրդի որոշման մեջ նշված այն հիմքին, որ «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթ» ընկերությունը մտադրություն չի ունեցել երրորդ անձանց զիջելու ապրանքային նշանի նկատմամբ իր ունեցած իրավունքները, ապա դատարանը գտնում է, որ նշված հանգամանքը վերաբերվում է երկու կազմակերպությունների՝ «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության և «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթ» ընկերության միջև կնքված զիջման պայմանագրին, որը կողմերի կողմից երբևէ չի վիճարկվել և չի առնչվում ապրանքային նշանի զիջման պայմանագրի գրանցման ընթացակարգի հետ:

Պատասխանողը չապացուցեց նաև, որ արտոնագրային հավատարմատարը «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթ» և «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերությունների միջև կնքված Ջիջման մասին պայմանագիրը գրանցման ներկայացնելու լիազորություն չի ունեցել:

Գործի նյութերում առկա են արտոնագրային հավատարմատարի լիազորագրերը տրված ինչպես հայցվոր ընկերության, այնպես էլ «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթ» ընկերության կողմից՝ տրված 2005 թվականի նոյեմբերի 18-ին երեք տարի ժամկետով:

Լիազորագրերը արտոնագրային հավատարմատարին իրավասություն են տալիս երկու ընկերությունների անունից դիմումներ ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն կապված ապրանքային նշանների գրանցման, զիջման, ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների դադարեցման և ցանկացած այլ հարցերով, որոնք կապված են ապրանքային նշանների իրավունքների ձևակերպման ու պաշտպանության հետ, վարել այդ կապակցությամբ գրագրություն:

Լիազորագրի տրման դրանով սահմանող իրավասությունների շրջանակի որոշման և լիազորագրի դադարման հարցերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ գլխի կանոններով: Մասնավորապես, 321-րդ հոդվածը սահմանում է լիազորագրի հասկացությունը, իսկ 324-րդ հոդվածը սահմանում է լիազորագրի դադարման հիմքերը:

Օրենսգրքի այդ հոդվածներից ուղղակիորեն բխում է, որ լիազորագրով լիազորված անձն իրավասություն է ստանում իրականացնել լիազորագրով նշված գործողություններն ամբողջ ծավալով լիազորագրի գործողության ամբողջ ընթացքում:

Այս առումով, պատասխանող կողմից այն պնդումները, թե սույն գործով հիշատակվող լիազորագրով նշված չէ զիջման մասին պայմանագիրը գրանցման ներկայացնելու հստակ ժամկետ և բացակայում է կոնկրետ այդ ապրանքային նշանի զիջման մասին պայմանագիրը գրանցման ներկայացնելու կոնկրետ հանձնարարություն, չեն կարող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերը նշված հոդվածների իմաստով լիազորված անձի իրավասությունների վիճարկման կամ կասկածի տակ դնելու հիմքեր հանդիսանալ:

Վեչը նշվածից դատարանը հանգեց այն եզրակացության, որ բողոքարկման խորհուրդը իր 2008 թվականի հուլիսի 29-ի ապրանքային նշանի զիջման պայմանագրի գրանցումն անվավեր ճանաչելու մասին թիվ 24/08 որոշման մեջ չի հիմնավորել այն հանգամանքը, որ զիջման պայմանագրի գրանցումը կատարվել է օրենքի խախտմամբ կամ այն կատարվել է կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա:

Ամփոփում  
Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-131, 1494 հոդվածներով դատարանը

1. Հայցը բավարարել անվավեր ճանաչել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության Բողոքարկման խորհրդի 2008 թվականի հունիսի 29-ի ապրանքային նշանի (գրանցման թիվ՝ 9935) զիջման պայմանագրի գրանցումն անվավեր ճանաչելու մասին թիվ 24/08 որոշումը:  
 2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:  
 3 Սույն դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ընթացքում:  
 Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

**Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ս . Թ Ա Դ Ե Վ Ո Ս Յ Ա Ն**

<b>Որոշման ամսաթիվը:</b>	27-02-2009
<b>Դատարան:</b>	Կենտրոն և Նորք-Մարաշ
<b>Որոշման բովանդակությունը:</b>	
<b>Որոշման հիմքը</b>	
Հոդված	86 հոդ
<b>Ուղարկման ամսաթիվը:</b>	27-02-2009
<b>Էջերի քանակը:</b>	
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Գրության համարը:</b>	

**Դատական Գործ N: ԵՔԴ/1066/02/08**

<b>Ամսաթիվ:</b>	06-03-2009
<b>Ամսաթիվ:</b>	06-03-2009
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	Սամվել Եփրեմի Թադևոսյան
<b>Ամսաթիվ:</b>	23-03-2009
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:</b>	15-05-2009
<b>Էջերի քանակը:</b>	144
<b>Գործին կից նյութեր:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	

Ամսաթիվ:	15-05-2009
Էջերի քանակը:	144
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	
Ուր:	
Գրության համարը:	
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	

Ամսաթիվ: 04-06-2009

**Ղատական Գործ N: ԵՔԴ/1066/02/08**

Ամսաթիվ:	23-03-2009
<b>Բողոք բերող անձը</b>	
Անուն:	Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պտէ Լթը
Հասցե:	Նորթ Բրիջ Սինգապուր
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Լիանա
Ազգանուն	Յորդանյան
Հասցե	
Ում կողմից է բերվել բողոքը:	3-րդ անձ
Պետական տուրք:	0
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
<b>Պատասխան բերող անձը</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող ղատական ակտը:	23.02.09 բավարարվել է
Գործի համարը:	ԵՔԴ/1066/02/08

Ամսաթիվ:	22-06-2009
Վիճակագրական տողի համարը:	5.5
Գործի համարը:	ԵՔԴ/1066/02/08
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	144

Ամսաթիվ:	23-06-2009
<b>Նախագահող ղատավոր</b>	
Ղատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.

Դատավորի անուն:	Կարեն Վանուշի Զիլինգարյան		
Որոշման ամսաթիվ:	26-06-2009		
Ժամկետ:	17-07-2009		
<b>Որոշման հիմքը</b>			
Հոդված	213	Մաս 1	Կետ 1
Բողոքի ստացման ամսաթիվը:	17-07-2009		
Երբ:	21-07-2009		
Որոշումը ուղարկվել է կողմերին:	03-08-2009		
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	03-08-2009		
Այլ նշումներ:			
Ամսաթիվ:	15-10-2009		
Ծանուցագիրը ուղարկվել է:	03-08-2009		
Ժամ:	11:00		
Նիստերի դահլիճի համարը:	321		
Ամսաթիվ:	05-11-2009		
Ծանուցագիրը ուղարկվել է:	28-10-2009		
Ժամ:	11:20		
Նիստերի դահլիճի համարը:	321		
Ամսաթիվ:	19-11-2009		
Դատական ակտը բեկանվել է ամբողջությամբ:	Գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության		
Դատական ակտը բեկանվել է մասնակի:			
Այլ նշումներ:			
Դատական ակտ:	<p>Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ 1066/02/08 2009թ.  Ո Ր Ո Շ ՈՒ Մ  ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  19 նոյեմբերի, 2009թ. թ. Երևան</p> <p>ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը հետևյալ կազմով՝</p> <p>նախագահող դատավոր  դատավոր  դատավոր Կ. Զիլինգարյան,  Ա. Խառատյան,  Ա. Պետրոսյան,</p> <p>քարտուղարությամբ՝ Ա. Խաչատրյանի,</p>		

դռնբաց դատական նիստում քննելով թիվ ԵՔԴ 1066/02/08 քաղաքացիական գործով, ըստ հայցի «ՏՎՄ Թրեյդ» ԲԲ ընկերության ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «Մասթեր Բևրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ» ՍՊ ընկերության մտավոր սեփականության խախտված իրավունքները վերականգնելու և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 2008թ. հուլիսի 29-ի ապրանքային նշանի (գրանցման թիվ՝ 9935) զիջման պայմանագրի գրանցումն անվավեր ճանաչելու մասին թիվ 24/08 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, Երևանի քաղաքացիական դատարանի 23.02.2009թ. վճռի դեմ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «Մասթեր Բևրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ» ՍՊ ընկերության անունից բերված վերաքննիչ բողոքը,

#### Պ Ա Ր Ձ Ե Ց

27.10.2008թ. Երևանի քաղաքացիական դատարանին ներկայացված հայցադիմումում պնդելով, որ «Մասթեր Բևրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ» ՍՊ ընկերության կողմից իրեն պատկանած «GOLDEN EAGLE» ապրանքային նշանը (գրանցման համարը՝ 9935) «ՏՎՄ Թրեյդ» ԲԲ ընկերությանը զիջելու մասին 18.11.2005թ. պայմանագրի գրանցման վերաբերյալ ՀՀ մտավոր սեփականության գործակալության 29.05.2008թ. որոշումը նույն գործակալության բողոքարկման խորհրդի 29.07.2008թ. թիվ 24/08 որոշմամբ անվավեր է ճանաչվել քաղաքացիաիրավական հարաբերություններին պետական մարմնի անթույլատրելի միջամտության դրսևորմամբ, «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 25-րդ, 29-րդ, ՀՀ քաղ. օր.-ի 437-րդ, 468-րդ և 1177-րդ հոդվածների, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 10.03.2005թ. թիվ 49-Ն հրամանով հաստատված «Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի» 4-րդ և 5-րդ կետերի անտեսմամբ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 57-րդ հոդվածների խախտմամբ, հայցվորը խնդրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա անվավեր ճանաչել ՀՀ մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 29.07.2008թ. թիվ 24/08 որոշումը:

Պատասխանողն առարկել է հայցի դեմ, պատճառաբանելով, որ «GOLDEN EAGLE» ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները որևէ երրորդ անձի զիջելու մտադրություն չունենալու մասին «Մասթեր Բևրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ» ՍՊ ընկերության նամակն ստացած լինելու պայմաններում իր գործողությունները չեն կարող որակվել որպես միջամտություն կողմերի քաղաքացիաիրավական հարաբերություններին, իսկ նշված ընկերության բողոքի քննության ժամանակ էլ պարզվել է, որ հայցվորի նշած ապրանքային նշանի զիջման պայմանագիրը գրանցելու վերաբերյալ դիմումը ներկայացրած անձը՝ արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանը, չի ունեցել համապատասխան լիազորություններ (Ա. Գալոյանն ինքն էլ ընդունել է, որ ինքը «Մասթեր Բևրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ» ՍՊ ընկերությունից որևէ պայմանագրի գրանցման մասին դիմում ներկայացնելու հանձնարարություն չի ստացել, իսկ պատասխանողին ներկայացված լիազորագիրն իրեն տրամադրել է «ՏՎՄ Թրեյդ» ԲԲ ընկերությունը):

Դատարանի որոշմամբ գործի քննությանը վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի կարգավիճակով մասնակից դարձված «Մասթեր Բևրիջ Ինդասթրիս

